

1913 ձեռ.ի մէջ այս ճառը կը կարդանք թղ. 75բ-83բ(29) :

11. — Ձեռ. 251-ի մէջ կը գտնենք յետոյ Սաղմոսներու վրայ սուրբ Բարսղի մէկ քանի մեկնութիւններ : Առաջինն է Ա. Սաղմոսին վրայ, թղ. 90ա-100բ. սկիզբն է. «Ամենայն գիրք աստուածաշունչք եւ աւգտակարք»... , որ լիովին կը համապատասխանէ վերջաւորութեամբ եւս յունարէնին (PG 29, սիւն 209-228) :

Ձեռ. 1913-ի մէջ մեկնութիւնն կը դրանուի թղ. 84ա-93բ(30) :

12. — Յետոյ կը յաջորդէ մեկնութիւն մը 59-րդ Սաղմոսին, ձեռ. 251, թղ. 100բ-106ա, սկսելով. « Ի յաւթարմտութիւն հայելով ձերոց խելեաց »... , ճիշտ յունարէն բնագրին պէս PG 29, սիւն 460-469 :

Ձեռ. 1913 այս մեկնութիւնը ունի թղ. 94ա-98բ(31) :

13. — 61-րդ Սաղմոսին մեկնութիւնը կը յաջորդէ ձեռ. 251-ի մէջ, թղ. 106ա-113բ, եւ կը սկսի. «Ներկուս սաղմոսս ծանեաք յաղագս Իդիթումայ որք ունին»... տես համապատասխան յունարէն բնագիրը PG 29, սիւն 469-484 :

Ձեռ. 1913-ի մէջ այս մեկնութիւնը կը սկսի թղ. 98բ եւ կը շարունակէ մինչեւ

թղ. 103բ, ուր յանկարծօրէն կ'ընդհատուի սա բաներով. «Իսկ զկենցաղոյս ընտրութիւն ինքնիշ»... : Այս անցքը կը գտնենք ձեռ. 251-ի մէջ թղ. 111բ չուրջ Եօթը սիւն ճառիս իրական վերջաւորութենէն առաջ. հետեւաբար խառնակութիւն մը կայ զբնագրին մէջ. թղ. 103բ-է վերջ երկու թուղթ դատարկ թողուած է, եւ ուր վերստին կը սկսի բնագիրը՝ թղ. 106աով, արդէն իսկ յաջորդ մեկնութիւններէն մէկուն առջեւ կը գտնուինք(32) :

14. — ՃԺԴ Սաղմոսին մեկնութիւնը 251 ձեռ.ի մէջ կը գտնուի թղ. 113բ-119ա, սկզբնաւորութեամբ. «Վաղ ժամանակը ի քահանայական յայտ տեղի ի մէջ զիշերւոյ»... , նման յոյն բնագրին, PG 29, սիւն 484. Իսկ վերջաւորութիւնը կը գտնենք սիւն 493-494 :

Ձեռ. 1913 չունի այս մեկնութեան հայ թարգմանութիւնը, եւ ուր պէտք էր ընդօրինակուած ըլլալ՝ և ր կ ու դատարկ թուղթ կայ. թղ. 104 եւ 105(33) :

15. — Մեկնութիւն ՃԺԵ Սաղմոսին ձեռ. 251-ի թղ. 119ա-120բ-ի մէջ. ըսկիզբն՝ «Հաւատացի յաղագս որոյ խաւսեցայ. եւ ես նուաստացայ յոյժ»... : Տես յունարէնը համապատասխան PG 30, սիւն 104-116 :

(29) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 9, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 11, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 35բ-38ա, Վիեննայի այս ձեռագրին մէջ հոս հետեւադրուած թիւն մը կայ վերջաւորութեան՝ որ հինգ ճառերու վրայ կ'երկնայ. Հոս եղած բնագիրը Թ. 12 ճառին վերջաւորութիւնը կը տեսնուի, որու մասին պիտի խօսինք : Մեր Թ. 10 ճառին վերջաւորութիւնը Թ. 13 ճառին մէջ կը գտնուի, Ահա Թէ ինչպէս պէտք է ուղղել. 10րդ ճառին վերջաւորութիւնը պէտք է 12րդ ճառին տարուի. 12րդ ճառինը՝ 14րդին, 13րդ ճառինը՝ 10րդին, իսկ 14րդինը՝ 16րդ ճառին. հոսկ 16րդ՝ 13րդին :

(30) Էջմիածին. ձեռ. 907 (927), Թ. 6 և ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 11, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք,

պահոց, Թղ. 180 եւն. ճառ 5, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 41ա-44ա :

(31) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 12, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 12, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 45ա-47բ, Վերջաւորութեան մագին տես ծն. 29 :

(32) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 10, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 13, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 39ա-40ա, Վերջաւորութեան համար տես ծն. 29 :

(33) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 15, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 14, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 53բ-54ա, Վերջաւորութեան մասին տես ծն. 29 :

Հատուած մը մեկնութենէս կը գտնուի ձեռ. 1913-ի մէջ, թղ. 106ա հետեւեալ ըսկիզբնաւորութեամբ. «զի եւ ոչ ըստ կարգին ի վերայ ամէլ նմա կարողութիւն է»... : Այս կէտը կը կարդանք 251 ձեռ.ի մէջ թղ. 121ա, որմէ կը հետեւի Թէ վերոյիշեալ սկզբնաւորութիւնը ՃԺԵ Սաղմոսին մեկնութեան կէսին է. իսկ. այս հատուածին վերջաւորութիւնը 1913 ձեռագրի թղ. 110ա կը համապատասխանէ մեկնութեանս վերջաւորութեան, ինչպէս որ է 251 ձեռ.ի մէջ(34) :

16. — Սուրբ Բարսղի համարուած Յաղագս Երրորդութեան ճառը, թարգմանութիւնն է ճառ վասն հաւատոյ ըսուածին (PG 31, սիւն 464-472) : Ճառիս սկզբնաւորութիւնն է թղ. 126ա 251 ձեռ.ին. «Զաստուած յիշել հանապազ բարեպաշտութիւն է»... : Կը համապատասխանէ ամբողջ վերջաւորութեամբ եւս թղ. 130բ յոյն բնագրին :

1913 ձեռ.ին մէջ ճառս կը գտնուի թղ. 110բ-114ա :

Այս ճառը որ բոլոր ձեռագիրներուն մէջ Ս. Երրորդութեան վրայ իբր մեկնութիւն մը կը գտնուի, կայ նաեւ ձեռ. 512-ի մէջ (Սարգս. 202), թղ. 14բ-15բ հատուածով մը, որուն վերջաւորութիւնը կը համապատասխանէ PG 31, սիւն 468 Ե-ի, ինչպէս նաեւ ձեռ. 653-ին (Սարգս. 228), թղ. 5բ-7ա(35) :

17. — Մեկնութիւն մը սուրբ Բարսղի Յովհաննու Աւետարանին ի սկզբանէ էր

Բանն՝ Յառաջաբանին վրայ, ճառ ԺԶ (PG 31, սիւն 472-481) : Ձեռ. 251-ի մէջ կը սկսի թղ. 130ա. «Ամենայն աւետարանչացն ձայն մեծաբուսագոյն ալլոցն հոգւոցն»... : Ճառս կը համապատասխանէ վերջաւորութեամբ եւ (թղ. 135բ) յոյն բնագրին :

Ձեռ. 1913-ի մէջ ճառս կը գտնուի թղ. 114բ-119բ(36) :

18. — Յետոյ կու գայ սուրբ Բարսղի ճառ ի ծնունդ փրկչին, ձեռ. 251, թղ. 135բ-145ա, կը սկսի. «Քրիստոսի ծնունդ իւրականն եւ առաջինն եւ յատուկ իւրոյ»... , որ կը համապատասխանէ վերջաւորութեամբ եւս յոյն բնագրին (PG 31, սիւն 1457-1476) :

Ճառիս կը կցի հետեւեալ յիշատակարանը (թղ. 145ա). «Դաւիթ թարգման Տարաւնացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ, ի Դամասկացոց քաղաքին, հրամանաւ Համադասպայ Կուրապաղատի Մամիկոնենից տեառն, եւ Լզիցի աւրհնութիւն Տեառն ի վերայ նոցին(37) :

1913 ձեռ.ի մէջ կը գտնուի ճառս, նոյն յիշատակարանով, թղ. 119բ-127ա : Ճառս կը գտնուի հաւասարապէս Ս. Ղազարու հետեւեալ ձեռագիրներու մէջ.

Ձեռ. 463 (Սարգս. 212),

Թղ. 19ա-23ա :

Ձեռ. 467 (Սարգս. 224),

Թղ. 10ա-16բ :

(34) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 13, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 15, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 48բ-50ա :

(35) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 14, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 16, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ) Թղ. 51ա-52բ, Վերջաւորութեան համար տես ծն. 29, Ամբողջ ճառը տպուած է «Կից հաւատոյ» ի մէջ, էջ 781Ե-833Զ, տես ծն. 7 (անշուշտ նոյն. թարգմանութիւնը) :

(36) Էջմիածին. ձեռ. 924 (944), Թ. 31, ճառ 16, Երոշապետ. ձեռ. 406, Գիրք պահոց, Թղ. 180 եւն. ճառ 17, Վիեննա. ձեռ. 217 (միջրո-ֆիւմ), Թղ. 55ա-56բ :

(37) Համադասպ Մամիկոնեանի վրայ, որ Կոստանդ Բ կայսրէն կիրապաղատութեան պատիւն ընդունեցաւ Իրդ դարու կիսուն, տես G. Garitte, La Narratio, էջ 438-439, և J. Laurent, L'Arménie en Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 836, Paris, 1919, էջ 202 և 334 :

Ձեռ. 299 (Սարգս. 215),
թղ. 3բ-7բ (պատմա-
աշխ) :

Ձեռ. 247 (Սարգս. 233),
թղ. 54ա-57ա (հատուած
մը մի-
աշխ) :

Կան նաև երկու նման պատմա-
աշխներ 512 (Սարգս. 202) ձեռ. ի մէջ, թղ. 140ա

(38) Էջմիածին. ձեռ. 907 (927), թ. 7. ձեռ. 920
(940), թ. 13. ձեռ. 925 (945), թ. 5. և ձեռ. 924 (944),
թ. 31, ճառ 17: Երոզսահեմ. ձեռ. 406, Գիրք
պահոց, թղ. 180 և ձեռ. 5ա և ձեռ. 71, թ. 17: Բարի-
զ. ձեռ. 110 (մեքրո-ֆիլմ), թղ. 22բ-26բ, Վիեննա. ձեռ.
217 (մեքրո-ֆիլմ), թղ. 57բ-61ա, ուր կը գտնենք նաև
յիշատակարանը:

(39) Էջմիածին. ձեռ. 907 (927), թ. 8 և ձեռ. 924
(944), թ. 31, ճառ 18: Երոզսահեմ. ձեռ. 406, Գիրք
պահոց, թղ. 180 և ձեռ. 5ա և ձեռ. 1001, թ. 13:
Մարտի. ձեռ. II, Միգրաթի, հիւպատոս Պարսից
1922-ին, թղ. 94-95. տես F. Macler, Notice de
manuscripts arméniens ou relatifs aux Arméniens
vus dans quelques bibliothèques de la péninsule
ibérique et du Sud-est de la France, dans Rev.
Etud. Arm., 2 (1922), էջ 244. տես նաև Ա. Ս. Սիւր-
մէնան (գործչիւրցան տեսնալ) Մայր ցուցակ հայերէն
ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներով, I, Pa-
ris, 1950. - Ամբողջ խօսակցութիւնը տպուած է «Կնիք
հաւատոյ» թ. մէջ, էջ 84-98 (նոյն թարգմանութիւնը):

և 1592 ձեռ. ի մէջ (Սարգս. 237), թղ.
23ա(38) :

19. — Հակաճառութիւն մը սուրբ
Բարսղի և Ապողինարի մէջ, ձեռ. 251,
թղ. 145ա-154ա: Այս հակաճառութիւնը
կը ներկայանայ խօսակցութեան ձևի տակ
և պատասխանները ամէնքն ալ նշանակ-
ուած են խօսակցին անունով. կը սկսի.
«Բարսեղ ասէ. Մարմին մարդկային ու-
նէ՞ր քրիստոս թէ ոչ»: Այս սկզբնաւորու-
թիւնը և վերջաւորութիւնը կը համապա-
տասխանեն Սուտ-Աթանասի խօսակցու-
թեան սկզբնաւորութեան և վերջաւորու-
թեան, PG 28, սիւն 1249-1265:

Ձեռ. 1913-ի մէջ հակաճառութիւնն կը
գտնուի թղ. 127ա-136ա:

Կը գտնուի սա նոյնպէս ձեռ. 1108-ի
մէջ (Սարգս. 265), թղ. 471ա-482ա բո-
լոր պարբերութիւնները, յունարէնի մէջ
ընծայուած զինքը ուղղափառ կոչողին,
կը գտնուին հայ ձեռագիրներու մէջ սուրբ
Բարսղի անունով(39):

Թրգմ. Հ. ՔԵՐՈՒՄԷ ԶՐԱՔԵԱՆ

(Շարունակելի)

ԹԱԳԷՈՍ Վ. ԿՈՂՈՆԻԱՅԻ, ԹՈՒԱԹԵՅԻ ԵՒ ԹԱԳԷՈՍ ԵՐԷՑ

ՍԵՐԱՍՏԱՅԻ ՏԱՂԱՍՏՆԵՐ

Հանդէս Ամսօրեայ-ի 1953-ի թիւ 1-3-ի
մէջ (էջ 53-71) Հ. Ն. Վ. Ակինեան իմ
վերը փոխ առած խորագրով ունի շահե-
կան ուսումնասիրութիւն մը, ուր դար-
ձեալ պատմական գիտնական Հայրը կ'ը-
նէ իր սովորական քմածին նոյնացումները
համանուն ժամանակակից անձերու մա-
սին:

Քանի որ վերոյիշեալ երեք թաղէոսնե-
րուն մասին մենք ալ խօսած ենք հրատա-

րակուած կամ դեռ անտիպ զանազան աշ-
խատութեանց մէջ, բնական է որ նկատի
ունենանք յարգելի Հօր կարծիքները այս
երեքին մասին:

Նախ առնենք Թաղէոս Վ. Կողոնիա-
ցին:

Ծննդեան տարին, տեղն ու ծնողաց ա-
նունները անծանօթ կը մնան դեռ: Հ. Ա-
կինեան կը հետեւցնէ որ «ծնունդը կարելի
է դնել իբր 1500» (էջ 53): Նոյն միջոցա-

կ'ուզէ որ ան Կողոնիա (Շապին-Գարահի-
սար) ծնած ըլլայ, «այս պատճառով ալ
կրած է իբրեւ մականուն Կողոնիացի»
(անդ): Թէեւ պէտք է յիշել որ անպատ-
ճառ ծնած տեղւոյն անուամբ չէ որ կը
յիշուին շատեր: Օրինակ՝ Յովհաննէս
Երզնկացի, որ Ծործորեցի կոչուեցաւ,
Ստեփաննոս Դ. Երզնկացի, որ Հոռմկա-
յեցի կոչուեցաւ, և ալն:

Թաղէոս Վ. Կողոնիացիի մասին ունինք
վկայութիւններ 1521ին (Երզնկա), 1534-
ին (Հալէպ և Երուսաղէմ), 1548ին կը
կարգէ Աւետարան մը հաւանաբար Եր-
զնկա:

1562ին Ղազար Գրիգ Երզնկա օրինակած
Մաշտոցի մէջ կը յիշէ «եւ զուսուցիչն իմ
գթադէոս րարունի վարդապետն, զի բա-
ղամ աշխատանս կրեաց ընդ իս և ևս
զում աշխատանս կրեաց ընդ իս և ևս
անմիտս ոչ կարացի դառնել լաւ»: Հ. Ա-
կինեան կ'եզրակացնէ որ 1562ին երբ Ղա-
զար կը գրէր իր Մաշտոցը և այս յիշա-
տակարանը, «ան (Թաղէոս) կենդանի էր»
(էջ 54): Սակայն Ղազարի վերոյիշեալ
յիշատակարանը բան մը չ'ըսեր Թաղէոսի
այդ առեմ կենդանի ըլլալուն մասին: Ին-
ծի ծանօթ ևս բազմաթիւ երախտապարտ
աշակերտներ, որոնք իրենց ուսուցիչին
մահէն շատ տարիներ վերջ դեռ երախտա-
գիտութեամբ կը յիշեն անոր անունը:
Ուրեմն հարց է Թաղէոսի 1562ին դեռ ողջ
ըլլալը և կարօտ է որոշ ապացոյցի: Երբ
մինչեւ 1562 Թաղէոսի կեանքին երկա-
րումը խնդրոյ նիւթ ընենք, այն ատեն
անոր իբր թէ 1500ին ծնած ըլլալու Հ.
Ակինեանի ենթադրութիւնը ինքնին կը
չքանայ(1):

Թաղէոս Վ. Կողոնիացի ուսած է Մա-
ղաքի Վ. Դերջանցիի ներքեւ և անոր

(1) Հ. Ակինեան 1532ին կ'ուզէ որ Կողոնիացի
ստացած ըլլայ վարդապետական դասընթաց. մինչ
1521ին Յայրապետի յիշատակարանը կը յիշէ
«Թարմատար և յոգնամեղ Թաթոս վարդապետ
կողոնեցոյ»:

նուիրած է «Անահիմ Ի Կողոնեցի Թաղէոս
վարդապետէ առ իմաստուն վարդապետն
իւր Մաղաքի Դերջանցի»: Ասիկա է
Թաղէոսի մեղի հասած միակ «գրական»
աշխատանքը: Իրմէ ուրիշ աշխատութիւն
չունինք: Նոյնիսկ կ'երեւայ թէ գրչու-
թեամբ չէ գրադած, այլ միայն մեղի տը-
ւած է երեք ձեռագիրներ կարգեալ (առ
այժմ այսքան ծանօթ է): Ասոնցմէ առա-
ջինը Յայրապետը մըն է, Երզնկա կաղ-
մած: Երկրորդը Արարածոց գիրք մը, Հա-
լէպ գտնուած և Երրորդը Աւետարան մը,
1548ին վերակազմուած, սակայն 1471ին
գրուած:

1562ին Ղազարի Մաշտոցին յիշատա-
կութենէն կը տեսնենք որ Թաղէոս ունե-
ցած է նաև աշակերտներ, որոնցմէ գոնէ
հատ մը՝ Ղազարը՝ ծանօթ է:

Ահա՛ ինչ որ գիտենք որոշ կերպով Թա-
ղէոս Կողոնիացիի մասին, որ միշտ ալ ո-
րոշ յիշած է իր Կողոնիացի ըլլալը:

* * *

Հիմա խօսինք Թաղէոս Թոխաթեցիի
մասին:

Իր մասին ոչ մէկ ծանօթութիւն ծնն-
դեան վայրի, ժամանակի, կրթութեան,
ծնողաց ևն.: Հ. Մ. Պոտուրեան «1550ի
ատենները ծնած. և կամ այն է՝ որ մը-
տենները ծնած է Ստեփանոս Թո-
խաթեցի Տաղասացին, և կամ ուսուցիչ-
ընդ»: Հ. Ակինեան իրաւացիօրէն գիտել
վու տայ որ «որ և է վկայութիւն» չի
ներկայացներ Հ. Պոտուրեան իր եզրակա-
ցութիւնը հաստատելու համար: Ըստ իս
1550ին ծնած ըլլալը լոկ ենթադրութիւն
մըն է:

Մեր ձեռագիրներուն մէջ կան շարք մը
տաղեր որոնք կը վերջանան «Թաթոսն ա-
սաց», «Թաթոս» և անգամ մըն ալ «Թո-
խաթցի Թաթոսն ասել է»: Իսկ ուրիշ տա-
ղի մը խորագիրն ալ է «Տաղ հոգւոյ ի
Թոխաթցի Մհտեցի Թաթոսէ». իսկ տաղը